

## Հայտարարություն

**Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Տեխնոլոգիա» (5 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
  - 1 լուսանկար 3x4 չափի,
  - բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
  - անձը հաստատող փաստաթուղթ,
  - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
  - ինքնակենսագրություն (ձև 5),
  - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
  - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
  - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
  - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
  - ՀՀ Կառավարության 2022թ. ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (Մասնակցած լինելու դեպքում),
  - «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին կետի (Առկայության դեպքում, նաև 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ,
  - «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից

Նշված փաստաթղթերը ներկայացնել բնօրինակների հետ /պատճենների հետ համեմատելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. հոկտեմբերի 3-ից մինչև 2024թ. հոկտեմբերի 16-ը ներառյալ, բոլոր աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից 15:00-ն:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. հոկտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք, Ա2 թղմ, 12-րդ փողոց 8 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել (077)39-93-94 հեռախոսահամարով: